№ 18 Փետրվարի 13 (25) 1879 Փետրվարի 13 (25) № 18

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիւրքիայի հայերը դարձեալ անպատրաստ կը լինեն։ — Ներքին տեսութիւն։ Նամակ Խարկովից։ Նամակ խմբագրին։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Անգլիա։ Թիւրքիա։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՀԱՅԵՐԸ ԴԱՐՁԵԱԼ ԱՆՊԱՏՐԱՍՏ ԿԸ ԼԻՆԵՆ

Գիտէք, ընթերցող, ինչ են ասում հայերը, մանաւանդ Թիֆլիսցիները, մինչև անգամ նրանք, որոնք անցեալ տարի գրված էին «Մշակին», երբ նրանց առաջարկում են գրվել մեր լրագրին։ «Այս տարի չարժէ գրվել լրագրին, ասում են նրանք, որովհետև պատերազմ չը կայ և հայոց խնդիր չը կայ....»

Ուրեմն անցեալ տարի հայերը գրվում էին լրագրին, կամ հատով առնում էին հայոց թերթը, այն պատճառով, որ լրագիրը տպում էր հետաքրքիր հեռագիրներ, հետաքրքիր լուրեր։ Ուրեմն նրանց համար դա զուարճութիւն էր և ժամանակը անցնելու միջոց, և ոչ թէ պահանջ, ոչ թէ բարոյական պարտաւորութիւն....

Երբ երկու տարի սրանից առաջ զարթեցաւ հայոց խնդիրը, այսինքն Թիւրքաց հայերի դրութեան բարւոքման խնդիրը, մեր Թիւրքիաբնակ ցեղակիցները հասկացան որ իրանք անպատրաստ են այդ խնդրի աջողակ լուծվելուն և նրան բարի վախճանի հասցնելուն նպաստամատոյց լինել։ Ուրիշ կողմից Ռուսաստանի և Պարսկաստանի հայերը միայն այն ժամանակ համոզվեցան, որ անծանօթ լինելով իրանց Թիւրքիաբնակ արիւնակից եղբայրների դրութեան հետ, անկարող են, նրանց ճգնաժամի րօպէին, օգնել նրանց նիւթապէս և բարոյապէս։

Թիւրքաց հայերը, քսան տարի է, որ իրանց ձեռքումն ունելով այդպէս անուանված սահմանադրութիւնը, մի տեսակ ինքնավարութիւն եկեղեցական և վարչական գործերում, այդ ժամանակի ամբողջ ընթացքում ոչինչ չարեցին, անպատրաստ մնացին։

Պարսկաստանի հայերը իրանց բոլոր թէ բարոյական և թէ նիւթական յարաբերութիւնները ռուսաստանցի և Թիւրքիացի ցեղակիցների հետ կտրած, մնացին դարերով մեռելութեան մէջ։

Իսկ այդ ժամանակ, ռուսաստանցի հայերը, հայոց ազգի մի մեծ մասը, որ ամբողջ դարի ընթացքում, ապրելով ռուսաց խաղաղ տիրապետութեան տակ, բարեկեցութիւն էր վայելում, ռուսաց հայերը չը մտածեցին ուսումնասիրել իրանց Թիւրքիացի արիւնակից եղբայրների դրութիւնը։ Բարոյապէս և նիւթապէս ապահովված լինելով, նրանք չը մտածեցին այդ երկար և խաղաղ ժամանակամիջոցում այնպէս պատրաստել իրանց ամբողջ հասարակական ոյժերը, որ հարկաւոր բօպէին կարողանային բարոյապէս և նիւթապէս օգնել իրանց արիւնակից Թիւրքիացի եղբայրներին։

Հասաւ ճգնաժամը Թիւրքաց հայերի համար, հասաւ մի բօպէ, որ Թիւրքաց հայերի պէս մի կորած ազգին ներկայանում է հազիւ թէ մի անգամ հազար տարվայ ընթացքում,—և նրանք պատրաստ չէին։

Ո՞վ պէտք է նրանց քաջալերէր, ո՞վ պէտք է մեկնէր նրանց օգնութեան ձեռքը, եթէ ոչ նրանք, որոնք գտնվում էին նրանցից աջողակ դրութեան մէջ։ Հայոց մամուլը Ռուսաստանում զարթեցրեց Թիւրքաց հայերի մէջ մարդկային ինքնաճանաչութիւնը, մամուլը տուեց նրանց մի դառն դաս, հասկացրեց նրանց թէ դարերով անգործ էին մնացել.... Նրանք, կարծես, հասկացան, զղջացին, խոնարհութեամբ ընդունեցին իրանց տուած դառն դասը, ամենքը աղաղակեցին թէ պատրաստ չենք, պէտք է այսուհետև պատրաստվենք, պէտք է մեզ կրթենք, լուսաւորենք, մեզ ինքներիս հետաքրքրենք, ուսումնասիրենք, և այլն, և այլն,—բայց անցաւ ճգնաժամը և բոլորը կրկին մոռացվեցաւ։ Այժմ չը կայ պատերազմ, այլ ևս չը կայ հայոց խնդիր, չը կայ Բերլինի աւագաժողով, չը կան հետաքրքիր հեռագիրներ և թղթակցութիւններ լրագիրների մէջ, ասում են հայերը, առհասարակ. ուրեմն ի՞նչ հարկաւոր է կարդալ լրագիրները, հետաքրքրվել մեր Թիւրքիահպատակ եղբայրակիցների դրութեամբ, ուսումնասիրել նրանց կեանքը, ասում ենք մենք, ռուսաստանցի հայերս։

Ուրեմն անուշադիր թողնենք նրանց։ Իսկ մինչև այդ ժամանակ, թող Թիւրքիայի հայերը, տնտեսական և վարչական անտանելի հանգամանքներից ստիպված, գաղթեն իրանց հայրենիքից, ցրվեն աշխարհիս չորս կողմը, թող դատարկվի հայի հայրենիքը Հայաստանը,—և երբ կրկին (ո՞վ գիտէ երբ) կը ներկայանայ նրանց համար մի պատեհ բօպէ, թող նրանք կրկին անպատրաստ լինեն յարմար դէպքից օգուտ քաղելու, թոյլ լինեն հանդիպած արգելքներին առաջն առնելու։ Երբ կը ներկայանայ սպասված բօպէն, թող ոչ մի հայ էլ չը լինի Հայաստանում....

Եւ, ճշմարիտ, մենք ռուսաստանցի հայերս ապահովված և խաղաղ ապրելով, ի՞նչ հարկաւորութիւն ունենք կարդալ լրագիրները, ի՞նչ հարկաւոր է մեզի զուր գրգռվել, մեր հանգիստքունը խանգարել, հետաքրքրվել մեր Թիւրքիացի եղբայրակիցների Թշուառ դրութեամբ....

Աւելի լաւ չէ՞, որ իւրաքանչիւր հայը մտածի միայն իր անձի և իր ընտանիքի հանգստութեան և նիւթական շահերի վրա՝ հայ վաճառականը հաշուի թէ երկու թուման և երկու թուման չորս թուման է անում, հայ պաշտօնեան աշխատի լաւ վարձատրված պաշտօններ ձեռք բերել, հայ կապիտալիստն իր ամբողջ ոյժերը լարի շահաւէտ գործեր ճանկելու, հայ ադվոկատը անբուն գիշերներ անցնի վերցրած պրոցէսներից ոչ թէ իմաստը ուսումնասիրելու, այլ ստացված վարձատրութեան գումարը համրելու, հայ բժիշկը իր գրպանները իր վիզիտներից ստացած փողերով լցնի, հայ բանկիրը իր կեանքի նպատակը դնի աշխատել իւրաքանչիւր տարի աւելի դիվիդէնդներ և շահ ստանալու բանկային օպէրացիաներից,—ի՞նչ հարկաւոր է իր Թիւրքիայի ցեղակից եղբայրների դրութիւնը և կեանքը ուսումնասիրելու, ի՞նչ հարկաւոր է հետաքրքրվել նրանց ապագայով....

Թող հայոց լրագիրները ինչ ուզում են գրեն, թող հայոց լրագրապետները կանչեն, աղաղակեն.... Պարտաւորութիւն....

Մենք ուրիշ պարտաւորութիւններ չենք ճանաչում, բացի մեր պարտաւորութենից դէպի մեր գրպանը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽԱՐԿՈՎԻՑ

Յունվարի 16

Յունվարի 9-ին Խարկովի սակաւաթիւ հայերը ներկայ էին մի տխուր տեսարանի. այն է հայ օրիորդ Վարվարայ Արդարեանի թաղման հանդիսին, որ վերջին պատերազմի ժամանակ առաջին կարգի հիւանդապահի պաշտօն էր կատարում Կարմիր խաչի ընկերութեան հիւանդանոցում։ Հանգուցեալ օրիորդի պատմութիւնը շատ ցաւալի է և մի և նոյն ժամանակ հետաքրքիր։ Խեղճ օրիորդը, ինչպէս յայտնի է «Մշակ»լրագրի 1877 թ-ի № 88-ից, ծաղկափթիթ հասակում մտաւ վերջին պատերազմի սկզբում համալսարանի բժշկական ֆակուլտետի լսարանները, որտեղ անխոնջ աշխատութեամբ աւարտելուց յետոյ ստացաւ առաջին կարգի հիւանդապահի (сестра милосердія 1-го разряда) տիտղոսը և հրաւիրվեցաւ Կարմիր խաչի ընկերութեան մէկ հիւանդանոցում։ Այստեղ անցեալ տարի օրիորդը այնքան եռանդով և անձնանուիրութեամբ էր կատարում իր պաշտօնը, որ մերձի մահ հիւանդանալով վարակիչ հիւանդութեամբ տեղափոխվեցաւ հիւանդանոցից իր ծնողաց մօտ, որոնք նոյն ժամանակ շատ աննախանձելի դրութեան մէջ էին իրանց մնացեալ հինգ զաւակներով։ Օրիորդի հայրը և մայրը վայ տալով իրանց գլուխը սկսեցին ամենայն հնարք գործ դնել օրիորդին մահուան դռնից ազատելու և իրաւի նոցա աշխատութիւնը չանցաւ ի զուր. հիւանդ օրիորդը սկսեց ազատվել այդ վարակիչ հիւանդութիւնից, բայց մի և նոյն ժամանակ վարակվեցան նոյն հիւանդութեամբ մայրը, քոյրերը և փոքրիկ եղբայրը։ Այս միջոցին ծերունի հայրն էր մնացել միայն ոտքի վրա, իսկ մնացեալները բոլորը անկողնի մէջ էին բժշկի, հիւանդապահի և նիւթական միջոցների կարօտ։ Սոցա բնակարանը, որ բաղկացած էր ընդամենը մի փոքր սենեակից, աւելի տխուր տպաւորութիւն էր ունենում այցելողի վրա, քան թէ

Կարմիր Խաչի ընկերութեան որ և է մի հիւանդանոցը։ Ահա ցաւալի և անտանելի դրութիւն մի հայ գերդաստանի Խարկովում։

Չենք կարող չը յիշել այստեղ գովութեան արժանի տեղիս համալսարանի պրոֆեսորին, որ նոյն ժամանակ Կարմիր Խաչի ընկերութեան հիւանդանոցում բժշկապետի պաշտօն էր կատարում, և հայ բժիշկ-ուսանող պ. Դ. Օրբելուն, որոնք խնամք ունեցան այս ընտանիքի վրա որպէս բժիշկ և մերձակայ բարեկամ։ Վերջապէս բժշկապետի և բժիշկ-ուսանողի աշխատութեամբ օրիորդի մայրը, քոյրերը և փոքրիկ եղբայրը կամաց կամաց երկար հիւանդութիւն քաշելուց յետոյ վերականգնեցան, իսկ օրիորդը դեռ ևս չը կարողացաւ կատարեալ առողջութիւն գտնել, երբ ծերունի հայրը վարակվեցաւ նոյն հիւանդութեամբ և փոքր ինչ ժամանակ մարտնչելով մահուան հետ, անցաւ յաւիտենական կեանքը թողնելով իր գերդաստանը ամենախեղճ դրութեան մէջ։

Այս միջոցին ի հարկէ Խարկովի սակաւաթիւ հայերը տեսնելով նրանց սրտաշարժ վիճակը հասցրին ըստ կարողութեան իրանց օգնութիւնը դրամական նուիրատուութեամբ։ Նոր-Նախիջևանցիք ևս և այնտեղի հայ բարեգործական խորհրդարանը իմանալով իրանց հայրենակցի որբերի դառը վիճակը նոյնպէս ուղարկեցին նուիրատուութիւններ, բայց խեղճ գերդաստանը դորանով չը կարողացաւ բոլորովին բարելաւացնել իր դրութիւնը, պատճառ որ Կարմիր Խաչի հիւանդապահ օրիորդը չը կարողացաւ առողջանալ կատարեալապէս, այլ ընդհակառակն հիւանդանալով վարակիչ հիւանդութեան հետևանքով, դարձեալ անկողին ընկաւ և ամիսներով չարչարվելուց յետոյ յունվարի 7-ին աւանդեց իր հոգին ծաղիկ հասակում։ Չեմ կարող նկարագրել մօր և մանր որբերի կսկիծը, որոնք զրկվեցան յաւիտեան գերդաստանի միակ օգնականից։ Ահա մի հայ գերդաստան որ զոհ եղաւ ռուս-տաճկաց պատերազմին, պատերազմական դաշտից հեռու քաղաքում։ Ննջեցեալի պարկեշտ թաղմանը ներկայ էին տեղիս հայերը, որոնք հայ եկեղեցի չունենալով ստիպված էին առանց պատարագի կատարել թաղման հանդէսը միայն ռուսաց գերեզմանատան մէջ. նմանապէս ներկայ էին և հանգուցեալի օրիորդ-ընկերուհիները, որոնք եկել էին վերջին բարևը տալու իրանց սիրելի ընկերուհուն։ Հանգուցեալ օրիորդի թաղումը կատարվեցաւ մարդասէր հայերի նուէրներով և ըստ մեծի մասին աշխատութեամբ և օգնութեամբ Թիֆլիսեցի հայ վաճառական պ. Զուրաբ Ս. Զալեանի։

Այժմ մնում է խեղճ մօր մնացեալ որբերի դրութիւնը փոքր ի շատէ քարելաւացնել, որ այսպիսի բազմամարդ ռուսաբնակ քաղաքում, կարողանան առանց մուրացկանութեան ապրել։ Ցանկանում ենք ի բոլոր սրտէ որ մարդասէր և ազգասէր հայերի օգնութիւնը անպակաս լինի դէպի այրի տիկին Աբրդարեանը և իր որբերը, զոնէ մինչև որբերի փոքր ի շատ մեծանալը։

Ա. Մելքումեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 2 փետրվարի

«Մշակի» անցեալ համարներից մէկում խօսելով հայերի համակրութեան վրա դէպի հայ լրագիր և հայ ինտերես, իբրև անտարբերութեան օրինակ մատնացոյց արեցիք Նուխին և Թիֆլիսը։ Որովհետև նոյնանման երևոյթներ ունեն և նոյնանման պատճառներ, վասն որոյ կը ցանկանայի երկու խօսք ասել այդ խորհրդաւոր պատճառների վրա։ Թիֆլիսի կիսահայութիւնը կը համաձայնվէք հետևանք է այն ազդեցութեան, որ ունեցել է այս քաղաքի վրա վրաց տարրը, որը թէպէտ և հաստատում ենք այժմ թէ աքսորված է հայաբնակ Թիֆլիսից, բայց ոչմասամբ նա դեռ մնում է ու չարունակում ներգործել, մասամբ էլ արդէն ներգործել է ու անցել, թողնելով իր անջնջելի կնիքը հայ արիւնի և հայ հոգու վրա։ Որչափ էլ վիճելի հարց լինի դիտութեան կէտից թէ բնաւորութեան յատկութիւնները անցնում են ժառանգաբար մարդից մարդ, գործնական կեանքի մէջ այդ երևոյթը միշտ ճշմարտութեամբ է արտայայտվում. օրինակ Թիֆլիսը։ Քննելով Թիֆլիսցի հայի մըտաւոր և բարոյական յատկութիւնները, ով կարող է կասկածել թէ նա, իր ուրախ ու լայն բնաւորութեամբ, փափկասէր և զուարճախնդիր ձգտումներով, չարժուն և դիւրայափշտակ որպիսութեամբ, մտաւոր և բարոյական նուազ ոյժերով, ձևացնում է մի ճշգրիտ պատկեր անհոգ իմերէլի կամ աշխոյժ մինգրելացու։ Հետևաբար այսպիսի հայը, որ կազված է վրացու հետ բընական կերպով, պէտք է աւելի հակում ունենայ և ինստինկտական ձգտում դէպի վրացին և վրացութիւն, քան թէ հայը ու հայութիւն, պատճառ նորա բնաւորութիւնը միանգամայն տարբեր է հայի ծանրախոհ և ներփակված բնաւորութիւնից։

Ահա ինչու է և նորա ապատիան և նորա դանդաղութիւնը դէպի հայութիւն։ Մինչդեռ այդպէս չէ բացատրվում Նուխեցու ապատիան դէպի հայոց ընդհանուր կեանքը և շարժումը։ Նուխեցի հայը, ինչպէս մասամբ և շամախեցին և գանձակեցին, ամենեին արիւնով ու օրգանական կերպով չէ ենթարկվել այլացեղ տարրի ազդեցութեան, այլ միայն արտաքին ձևով, տպաւորութեան և սովորութեան կողմից, այնպէս որ բնակվելով մուսուլմանների բազմամասնութեան մէջ, իր մասնաւոր և հասարակական սովորութիւններով նա դառել է մուսուլման, բայց իր բնաւորութեան յատկութիւններով, իր ներքին բնածին ձգտումներով, նա մնացել է հայ, որովհետև իր յարաբերութիւնը մահմետականի հետ նա ունեցել է բաղարում և հրապարակում և ոչ թէ տան ու ընտանեաց մէջ։ Եւ այս տեսակ հանգամանքից յառաջ է եկել այն, որ այդ տեղի հայը խաղացել է միշտ երկդիմի դեր. նա արտաքուստ եղել է միշտ սիրալիր և վարվող թուրքի հետ, իսկ սրտի խորքում ատող ու խորշող նորանից։ Եւ սորա հետևանքը եղել է այն, որ վայրենաբարոյ և տիրապետող թուրքը կամաց կամաց սկսել է լինել համբերող և մինչև անգամ համակրող ու բարեկամ հային բոլոր ուրիշ քրիստոնեաների մէջ, իսկ հայը մնացել է հոգով միշտ նոյնը, միշտ հայ. և այսպէս Նուխայ և Գանձակի հայը, իր սիստեմատիկական մեղմութեամբ և ճարպիկութեամբ ձեացրել է իրանից այն դիւթական զօրութիւնը, որ չափաւորում է ու զսպում գաղանի կատաղութիւնը և զգում նորան վերջի վերջոյ իր տների և կամայականութեան տակ։ Այս տեսակ փոփոխութեան և յաղթութեան նշանները արդէն սկսում են արտայայտվիլ, երբ Նուխայ, Շամախու և Գանձակի թուրքը սկսում փոքր առ փոքր սովորել ու խօսել հայերէն և մինչև անգամ դէպի քրիստոնէութիւն դառնալ, որ երբէք չէ եղել առաջվայ ժամանակ։ Ի հարկէ որչափ հաստատաբարոյ էլ լինի այսպիսի հայը և որչափ հոգով կորովի, դարձեալ պահելով երկար ժամանակ բնացնող մեքենայական յարաբերութիւն, մի ստորադրեալ կեանք օտարի հետ, նա ինքը կորցրել է մասամբ և իր սրտի ոյժը և ազգայնութեան կրակը ու ճանաչողութիւնը. ապրելով սահմանափակների շրջանում, նա եղել է հասկացողութեամբ սահմանափակ և դժուարըմբռնող ընդհանուր գաղափարի լայնութեան։ Այսպէս թէ այնպէս թուրքաբնակ տեղերի հայը, կարելի է վստահ կերպով ասել թէ հայութեան համար եղել է և պիտի լինի ժամանակաւոր մի տեսակ առաքեալ և ոչ թէ թիֆլիսեցու պէս հոգէփոխ և մոլորութեան օրինակ։

Ահա այն մեծ տարբերութիւնը, յարգելի խմբագիր, որով զանազանվում է Նուխուայ հայի անշարժութիւնը Թիֆլիսցի հայից, վասն որոյ յուսով եմ որչափ առաջինը արժանի է ներողամտութեան և ուշադրութեան, այնչափ վերջինը խստութեան և արհամարհանքի։

Նուխեցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Ախալցխա, 4 փետրվ.

Խնդրում եմ բարեհաճէք ընդունել այս իմ ուղարկած 10 ռուբլին «Արարատեան ընկերութեան» համար։ Ես թէև շատ էի ցանկանում ստորագրութեամբ փող հաւաքել յիշեալ ընկերութեան օգտին, բայց դժբաղդաբար մտադրութիւնս, կամ ցանկութիւնս չիրագործվեցաւ և մընաց լոկ ցանկութիւն (ինչպէս այդ շատ է պատահում)։ Շատ էի սպասում թէ գուցէ մեր երիտասարդները տան մի ներկայացում այդ գործունեայ ընկերութեան օգտին, բայց ափսոս, ցարդ դեռ ոչինչ չէ երևում։ Իմ կարծիքով, անհրաժեշտ է և պարտք ամեն մի ազգասէր հայի այդպիսի չքնաղ ընկերութեանց համար ձեռք ձեռքի առած աշխատել և չը խնայել ձեռքից եկած օժանդակութիւն։ Եղբարք, քանի որ դեռ վառ է այդ ազգասիրաց աշխոյժն և եռանդը, քանի որ ոգևորված մեր տաճկաստանցի հայերը ապագայի յոյսերով գործում են, ինչու մենք անտարբեր ձևանանք. միթէ մենք չը պիտի խոստովանենք նոցա ազգօգուտ շարժումները այս վերջին երկու տարվայ ընթացքում, որը իրաւի շատ հաճելի բան էր։

Գրիչ ունեցողը, թող չը խնայէ իւր գրիչը գործածել այդ ընկերութեան գործունէութիւնը ազգին ներկայացնելու համար, լեզու ունեցողը թող խօսի, խրախուսէ, քաջալերէ դորան, փողի տէր անձը, վնաս չունի, թող մի փոքր սովորականից աւելի նուիրէ դորա գանձանակին, մտածելով որ օտարին չէ տուածը, միով բանիւ իմ կարծիքով, հարկաւոր է թէ գրչով, թէ խօսքով, թէ օգտաւէտ խորհուրդներով և թէ մանաւանդ դրամով օգնել, օգնել և միշտ օգնել։

Եղիսաբեթ Մամիկոնեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Бакинск. Извѣст.» լրագրին գրում են Ս. Պետերբուրգից, որ այնտեղ շատ են խօսում Ռուսաստանի բարձր ադմինիստրացիայի մէջ լինելու փոփոխութիւնների մասին, մանաւանդ պատերազմական, ծովային և ներքին գործերի մինիստրութիւնների մէջ։ Խօսում են պատերազմական մինիստրութեան մէջ ծախսերի պակասեցնելու մասին, իսկ ներքին գործերի մինիստրութեան մէջ բանտային և պօլիցիական ռեֆորմացիաների մասին։ Պետական կալուածների մինիստրութեանը դիտաւորութիւն կայ անուանել այսուհետև վաճառականութեան և արդիւնագործութեան մինիստրութիւն։ Լսվում է որ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը խնդրագիր է ներկայացրել որ իր իրաւասութեանը ենթարկվեն և տեխնիկական դպրոցները։ Ասում են որ ամենամօտ հերթական հարցերից մինն էլ այն է, որ հոգևոր ակադեմիաները դիտաւորութիւն կայ միացնելու համալսարանների հետ։

—

Վլադիկավկասից մեզ գրում են հետևեալը։ «Կարդալով ձեր լրագրի № 12-ի մէջ տպված առաջնորդող յօդուածը ինտելիգենցիայի մասին, ակամայ մտաբերեցի ինչպէս անցեալ տարի այստեղի հայոց հասարակութեան ինտելիգենցիայի ներկայացուցիչներից մինը տեսնելով իմ սեղանի վրա դրած «Մշակ» լրագիրը, արհամարհանքով ասեց ինձ. Я тоже получаю эту газету, только ея листы валяются у меня не развернутыми. Я подписался ради таго только, чтобы поддержать несчастнаго редактора. (Ես ևս ստանում եմ այս լրագիրը, բայց նրա թերթերը չը բացված ընկած են ինձ մօտ։ Ես գրվեցի որ պահպանեմ միայն ողորմելի խմբագրին)։ Տեսէք, ուրեմն, որ մեր ինտելիգենցիան յետ չէ մնացել ձեր Թիֆլիսի ինտելիգենցիայից։»

—

Ստացանք «Извѣстія Кавк. отд. Импер. Русскаго Географ. Общ.» հինգերորդ հատորը 1877—1878 թ-ների։

—

Ռուսաց «Кавказъ» լրագիրը ռուսաց երկու անկախ լրագիրների դադարելուց յետոյ, մտցրեց իր թերթերի մէջ մի նոր բաժին «Новости Армянской прессы» վերնագրով որտեղ քաղուածներ է անում տեղական հայոց մամուլից։

—

Փետրվարի 8-ին կատարվեցաւ Մ. Ամերիկեանի յուղարկաւորութեան հանդէսը։ Հանդիսին ներկայ էին հանգուցեալի բարեկամները և Թիֆլիսի հայոց մամուլի ներկայացուցիչները։ Այն խումբը որ ուղեկցեց Ամերիկեանին դէպի իր վերջին բնակարանը, բազմաթիւ չէր։ Ամերիկեան 35 տարեկան էր, նա ծնվեցաւ Ախալցխայում և իր ուսումը առաւ Թիֆլիսի Ներսիսեան դպրոցում։ Դեռ աշակերտ ժամանակ նա մեծ ընդունակութիւն էր ցոյց տալիս դէպի բնական արհեստը, մասնակցելով աշակերտներից կազմվող սիրողների ներկայացումներին։ Առաջին ժամանակները նա դուրս էր գալիս բեմը պատմական դերերում, բայց նրա տաղանդը կատարելապէս զարգացաւ տեղական կեանքից վերցրած պիէսաներում, մանաւանդ Դ. Սունդուկեանցի կոմեդիաներում։ Նրա տաղանդը յայտնի էր ոչ թէ միայն Թիֆլիսի հայոց հասարակութեան, բայց և դաւառական մի քանի քաղաքների, որտեղ նա ներկայացումներ տուեց։ «Մշակի» հրատարակման առաջին տարիներում նա աշխատակցում էր մեր թերթին որպէս ֆելիետոնիստ Զաքուչի կեղծեալ անունով։ Մի քանի տարի սրանից առաջ Ամերիկեան ուզեց և Կ. Պոլսի մէջ փորձել իր բաղդը։ Նա այնտեղ տուեց մի քանի ներկայացումներ և մի և նոյն ժամանակ աշխատակցում էր «Մանզումէի Էֆքեար» լրագրին։ Բայց դժբաղդաբար Կ. Պոլսի կլիման վնասակար ներգործութիւն ունեցաւ նրա առողջութեան վրա. նա վերադարձաւ այնտեղից թոքախտային հիւանդութեամբ։ Եւ, ահա, մի քանի օր սրանից առաջ, մեր տաղանդաւոր դերասանը անձնասպանութեամբ վերջ դրեց իր վերջին տարիների անտանելի կեանքին։

—

Նորերումս հրատարակվեցաւ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ անգլիերէնից ռուսերէն լեզուով թարգմանած մի գիրք հետևեալ վերնագրով. «Народы Турціи. Двадцать лѣтъ среди Болгаръ, Грековъ, Албанцевъ, Турокъ и Армянъ.»—(Дочери и жены консула.—(С. Пет. Изд. Л. Ф. Пантелѣева. 1879)։ Այս գրքի մասին կաշխատենք մի այլ անգամ աւելի մանրամասն կերպով խօսել։

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ ուղարկել են հետևեալ տողերը։ «Պերճ Պռոշեանցի «Կուսածաղիկ» գիրքը, ինչպէս իմացանք լրագիրներից, արդէն դուրս է եկել մամուլի տակից և յայտնված է, մինչև անգամ թէ այս ինչ դրամաճառի մօտ ծախվում է։ Բայց չենք հասկանում, ինչի այդ գիրքը չէ ուղարկվում այն բաժանորդներին որոնք ձեռնտու են եղել նրա տպագրութեանը»։

—

Փետրվարի 11-ին, կիրակի օրը, ԹԻՖԼԻՍԻ Դումայի ժողովը հաւաքվեցաւ քաղաքագլուխ ընտրելու դիտաւորութեամբ։ Բայց դարձեալ ոչոք չընտրվեցաւ։ Վճռվեցաւ հետևեալ կիրակի օրը կրկին հաւաքվել։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱ

—

«Indépendance Belge» լրագրի սեփական թղթակիցը յունվարի 5-ին Կապից (Հարաւային Աֆրիկայում) հաղորդում է հետևեալ տեղեկութիւնները.

«Վերջապէս Զուլուների դէմ պատերազմ հրատարակվեցաւ։ Այժմ ժողովուրդը սկսեց փոքր ինչ շունչ քաշել, որովհետև պատերազմի հրատարակելուն սպասելը աւելի ծանր է քան թէ նոյն իսկ պատերազմի սարսափի մէջ լինել։ Կարծես թնդանօթի առաջին հարուածը փարատեց ամենքի երկիւղը։

Սեր Բարտլ Ֆրէրը, որ մի ճարպիկ քաղաքագէտ է, բանագնացութիւններ բացեց Զուլուների հետ, մինչև որ բաւականին ոյժ ստանալով, ինքն իրան բաւական զորեղ դտաւ պատերազմական յարաբերութիւններ սկսելու։ Այս շաբաթ վերջնագրի ժամանակը լրանում էր, բայց վերջին օգնական զօրքերը դեռ չէին հասել։ Զորս նաւեր բերում էին 99-րորդ գունդը և զանազան բանակների խմբեր, որոնք բոլորը միասին կազմում էին մօտաւորապէս 2000 մարդ։

Սեր Բարտլ Ֆրէրի վերջնագիրը աւելի հեղնական ձև ունէր, և նրա մէջ ասված էր, որ անգլիացիք զուլուների դէմ ոչինչ չունեն և թէ նրանք միայն դժգոհ են Բոէրներից, որոնք ընդդիմանում էին, որ Անգլիան չը դրաւէ Տրանսվասլը։ Այս ժամանակները լրագիրները ասում էին որ կարմիր հագուստի կամ անգլիական զօրքի ի ե ն ի Ֆ օ ր մ ի երկիւղը միայն բաւական է, որ Սէկոկոնի և Սէտիվայո ցեղապետներին հպատակութեան մէջ պահի։ Այս երկու ցեղապետները առաջուայ պէս շարունակում են յանդգնութիւններ անել, և հաստատ կարելի է ասել, որ դրանք աւելի Բոէրներից և նրանց պատերազմականներից են վախենում, քան թէ անգլիական թագուհու բանակներից, որոնք, զոնէ առայժմս, չեն համարձակում նուաճել Սէկոկոնին։

Վերջնագրի զօրութեամբ Սէտիվայոն պէտք է անգլիացիներին 70,000 գլուխ տաւար

տար, բացի այդ, նա պէտք է նրանց մատներէր մի քանի գլխաւոր մարդոց, որոնք կասկածելի են թուացել անգլիացոց մի նոր սպառնութեան մէջ, և պէտք է ստիպէր իր զօրքերին ընդունել մի անգլիացի պաշտօնական, որի պաշտօնը պէտք է լիներ, եթէ ոչ կառավարել նրանց վարչութիւնը, գոնէ թելադրել նրանց իր ցանկութիւնները։ Վերջապէս դրանով, նա ստիպվում էր ոչնչացնել մահուան պատժի այն ձևը, որ գործ է դրվում Զիւլուլանդում։ Հասկանալի է, որ Սէտիվայօի պէս մի բարբարոս առաջնորդ ոչ մի կերպով չէ կարող համաձայնել այսպիսի բռնաբարիչ պայմաններին։ Ժօհն Դուն անգլիացին, որ երկար ժամանակ բնակվելով այս երկրում, Պանդայի (ներկայ ցեղապետի հայրը) հետ սերտ բարեկամ յարաբերութիւններ էր կապել, և որին անգլիացիք բանադնացութեան համար ուղարկել էին Զուլուսների մօտ, վերադարձաւ Նատալ, և յայտնեց որ Զուլուսների ցեղապետը ոչինչ զիջողութիւն չէ կամենում անել։

Նատալի մէջ լուր է տարածվել թէ մօտ 8000 Զուլուսներ բանակ են դրել Տուջէլա գետի ստորին ծանծաղուտներում, և թէ ուրիշ զանազան խմբեր շարվել են այս գետի երկայնութեամբ մօտ 40 մղոն տարածութեամբ. այս գետը Զուլուլանդի և Նատալի սահման է կազմում։ Ասում են որ սևերի բանակը բաղկացած է 30—40 հազար մարդուց, իսկ հարկաւոր միջոցին, այդ թիւը պատրաստ է կրկնապատկվել պահեստի զօրքերով, բայց այդ թիւերի մասին հաստատ տեղեկութիւններ չը կան։ Կաֆիրները զինված են Դրլադօա և Նատալում գնված հրացաններով։

Անգլիացոց զօրքի թիւը, օգնական զօրքերի հետ միասին, հասնում է հազիւ 6—7 հազարի, այն էլ դրանից պէտք է բաժանել, մի քանի խմբեր այնպիսի քաղաքների պահպանութեան համար ինչպէս են Մարիցբուրգը և Դուրբանը, որոնք Զուլուլանդից միայն մի օրվայ ճանապարհ հեռաւորութեամբ են գտնվում։ Անգլիացիների բաղդից սևերը դեռ այնքան արկածախնդիր չեն, եթէ ոչ մի ձեռքի հարուածով նրանք կարող էին կողոպտել Նատալի այդ երկու կենտրոնատեղերը, ուր զետեղված են պատերազմական գործիքների ամբարանոցներն ու մթերքները։ Անգլիացիք մտադրվում են մի և նոյն ժամանակ թշնամու բանակի մի քանի կէտերի վրա յարձակվել, որպէս զի կարողանան դրանով նրանց ոյժերը բաժանել։

Այն գունդերը, որոնք գտնվում են Դէրսօն, Գլին և Դուրնֆօր գնդապետների հրամանատարութեան ներքոյ, արդէն գտնվում են Տույէլա գետի եզերքում, և վայրկեանից վայրկեան Նատալում լուրեր են սպասում պատերազմական բեմից։

Հիւսիսում գնդապետ Բօլանդը, իր զօրքի մի մասը թողնելով Սըկօկոնիի դէմ, կամենում է թափանցել Զուլուլանդի մէջ, իսկ գնդապետ Սուլլիվան, որ արդէն գտնվում է Սէնտ-Լիւսիի ծոցում, որը զուլուսներին է պատկանում, խաբս տալու համար, կամենում է 150 մարդ ցամաք հանել։ Տրանսվալի սահմանակից բօէրները խոստացան նպաստել անգլիացոց յարձակմունքներին, միայն այն պայմանով, որ միշտ իրանց զօրավարների հրամանատարութեան ներքոյ կուտն։ Այս բօէրները գրեթէ բոլորն էլ գերմանական ծագումից են. սրանք այս երկիրն եկած հին գերմանական լեգիօնի մնացորդներ են։ Դրանք անգլիացոց համար լաւ ձեռնտու անկանոն զօրք կը լինեն։

Վաթերլէյ գնդապետը մի խումբ հեծելազօր և հետևակ զօրքի մի մաս գերի վերցրեց, նա շուտով կուղևորվի դէպի Զուլանսբէրգ, որպէս զի այնտեղ կարգ պահպանէ, մինչև որ զօրքերը կարողանան շարունակել Սըկօկոնիի դէմ պատերազմական գործողութիւնները։

Նատալից հաղորդում են լրագիրներին հետևեալ տխուր լուրը.

Կապիտան Պատերսօնը, որ մի երիտասարդ անգլիացու հետ գնացել էր որսորդութեան և գիտական հետազօտութիւններ անելու Զամբէզայի ջրվէժի մասին, դեռ տեղ չը հասած, երկուսն էլ յանկարծ մեռել են։ Ենթադրում են, որ նրանք թունաւորվել են մի ժանտահոտ ճահիճից ջուր խմելով։

ԹԻՒՐԿԻԱ

—

«Times» լրագիրը հաղորդում է, որ Ֆիլիպօպօլից եկած լուրերին նայելով, Բօլգարները սարսափելի վրդովված են այն ծրագրի դէմ, որով եւրօպական մի քանի պետութիւններ միասին կամենում են գրաւել Բօլգարիա. մի և նոյն լուրերը յայտնում են, որ բոլոր քաղաքացիք պատրաստ են զէնք բարձրացնել և հարկը ստիպած միջոցին բողոքել այն բռնաբարութեան դէմ, որ ճընշում է ժողովրդական ցանկութիւնը։ Ասում են որ արդէն Բօլգարիայում և արևելեան Ռումէլիայում 30 հազար կազմակերպված և զինված զօրք կայ, որը ամեն բօպէ պատրաստ է մի արիւնռուշտ ընդդիմադրութիւն ցոյց տալ։ Հաւատացնում են որ Եւրօպայի բաղադրված ոյժը կարող է հանել իր նպատակին միայն յորդառատ արեան հեղեղի գնով...

Կարծում են որ արևելեան Ռումէլիան պէտք է 15 գլխաւոր նահանգների բաժանվի, և այդ նահանգներն էլ զանազան մանր մանր գաւառների կը բաժանվեն։ Բոլոր եւրիտասարդները մտել են զինուորական ծառայութեան մէջ, և զինված են այն արագաձիգ հրացաններով, որոնք երբեմն ծառայում էին Սիւլէյման-փաշայի զօրքերին, և որոնց ռուսաց զինուորները գրեթէ ոչինչ գներով վաճառել են բնիկների վրա։ Ճշմարիտ է, նրանք կարօտութիւն ունեն պատերազմական մթերքների, բայց այդ էլ այնպէս նշանաւոր դժուարութիւն չէ։ Ցունվարի 2-ից սկսած անդադար հրացանաձգութեան կրթութիւններ են անում, և հաւատացնում են որ սրա համար 1,500-ից աւելի վարպետներ ունեն. ինչ կը վերաբերի փողին, Ֆիլիպօպօլում «Արծիւ» անունով մի ընկերութիւն է կազմվել, որ պատերազմական պիտոյքների համար ահագին գումարներով փող է ժողովում, և որ գաւառներում էլ բազմաթիւ տեղական ընկերութիւններ ունի, որոնք մի և նոյն նպատակով և մի և նոյն գլխաւոր ընկերութեան են ծառայում։ Իւրաքանչիւր բօլգար, որ տարեկան 1000 պիաստր եկամուտ ունի, ընկերութեան նոր կանոնադրութեան համաձայն, պէտք է յօգուտ «Արծուի» ընկերութեան ամսական վճարէ 10 պիաստր. դրակօնական օրէնքով կը վարվեն բոլոր այն մարդոց հետ, որոնք կը զլանան իրանց օժանդակութիւնը հայրենիքի փրկութեան սրբազան գործին։

Հէնց որ ռուսները կը հեռանան Բօլգարիայից, բօլգարները մտադրվում են իսկոյն բօլգար կառավարիչներ նշանակել։

Կասկած չը կայ որ բոլոր այս լուրերի մէջ աւելորդաբանութիւններ կարող են լինել, բայց հաւաստին այն է, որ ռուսները դուրս կը գան թէ չէ, բօլգարները բաւականին ընդդիմադրութիւն գործ կը դնեն եւրօպական գրաւելուն, և այդ շատ հասկանալի է. նրանք այսքան ճգնաժամից յետոյ, այնքան նշանաւոր զոհեր տալուց յետոյ, ինչ զարմանք, որ նրանք յուսային ազատ ինքնավարութեան. նրանք մինչև այսօր էլ օրօրում են իրանց այն յուսով, որ Եւրօպան այնքան անգութ և բարբարոս չի լինի, որ չը գնահատէ իրանց այնքան զոհերի արեան ձայնը։ Բայց XIX դարի արդարադատ դիպլոմատիան երեխայական ցանկութիւն է համարում բօլգարների այդ իրաւացի պահանջը և ասում է. «Այդ թանկագին խաղալիկը տուր ինձ, դու կարող ես դրան կոտրել, ես աւելի լաւ կը պահեմ»։

Էլ ինչ, տուէք դրան այդ խաղալիկը (!) խաղալի՞կ, դիպլոմատիան «խաղալիկ» է անվանում ստրկութեան ծանր շղթայի տակ կրած դարաւոր տանջանքների ու բազմաթիւ զոհերի արեան փրկանքը։ Մի՞թէ, ճշմարիտ, մեր դարի դիպլոմատիան այնքան հրէշ է, որ նա դեռ չէ կամենում լսել այնքան զոհերի ուրուականների ձայնը, որոնք դէպի ճշմարտութեան աթոռը արդարադատութիւն են պահանջում։

Թեղմ բօլգարներ, ձեզ անկեղծ բարեկամական խորհուրդ կարելի է տալ. համաձայնել ձեր խնամակալ Եւրօպայի պայմաններին, և սիրով ու քաղցրութեամբ տանել նրա ոսկեզօծ լուծը, որովհետև եթէ դուք չէք ճանաչում թէ ինչ է դիպլոմատիա խօսքը, կարելի է ձեզ այդ մի խօսքով բացատրել—դա այն խաւարային ոյժն է, որ անում է ինչ որ կամենում է։

Կայիրէյից հաղորդում են լրագիրներին թէ, հարաւային Եգիպտոսի մի մասում դեռ սով է տիրում։ Ջերջէհում, որ համանուն նահանգի գլխաւոր քաղաքն է, մի օրվայ մէջ սովից տասներկու հոգի մեռան։

Ֆիլիպօպօլում մի գաղտնի ժողով է կազմվել, որտեղ վճռել են, որ ժողովից չորս անդամներ բողոք ներկայացնեն, որպէս զի Տիրնօվայի ժողովին Ռումէլիան էլ մասնակցի։ Զը նայելով ռուսաց իշխանութեան, պանսլավեան ընկերութիւնները դրդռում են ժողովրդին, և բողոքներ են ստորագրել տալի։

Վիէննայից հեռագրում են «Times» լրագրին, որ մի տակարութիւն արգելք է լինում Սավֆէտ-փաշայի ճանապարհ ընկնելու դէպի Փարիզ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՎԻԷՆՆԱ, 6/18 փետրվարի։ Աւստրիական ըէյխսրատի պատգամաւորների ժողովում Շըտրէյմայէրը հաղորդեց, որ նոր կաբինէտ է կազմվել։

ԼՕՆԴՕՆ, 6/18 փետրվարի։ Հասարակական ժողովի նիստում Բարկը, պատասխանելով Օատիմէյին, ասաց. «Ես չեմ ստացել ռուս-թիւրքական վճռական հաշտութեան դաշնագրի պաշտօնական պատճէնը։ Զը գիտեմ թէ արդեօք լորդ Բիկօնսֆիլդը ստացե՞լ է թէ ոչ։ Ինչ կը վերաբերի պատերազմական վարձատրութեանը, Գօրչակովը հաւատացնում է, որ այդ վարձատրութիւնը չէ դիպչում Բ. Դրան պարտատէրերի շահերին։»

ԿՐՕՆՇՏԱԴ, 5 փետրվարի։ Առևտրական բանկը դադարեցրեց վճարել պարտատէրերին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 փետրվարի։ Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 96 ր., երկրորդ 95 ր. 25 կ., երրորդ 94 ր. 50 կ., չորրորդ 95 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմակը արժէ 233 ր. 75 կ., երկրորդ 234 ր. 75 կ., արևելեան առաջին փոխառութեան 5% տոմակը արժէ 92 ր. 50 կ., երկրորդ 92 ր. 25 կ., ոսկի 8 ր. 53 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 23 պէնս, ռուսաց 100 ռուբլ Փարիզի վրա 242 ֆրանկ։ Տրամադրութիւնը ամուր է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 փետրվարի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ փետրվարի 6-ին Լօրիս-Մելիքօվը հեռագրում է Մակօվին որ ժանտախտ տարածված տեղերում այդ ցաւով ոչ հիւանդացողներ, և ոչ էլ մեռնողներ կան։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 փետրվարի։ «Новое Время» լրագիրը փետրվարի 6-ից հաղորդում է Ֆիլիպօպօլից, որ Բօլգարիայում մի խնդիրք կազմեցին և տուին գեներալ Ստօլէտովին, որի մէջ յիշված է ռուսաց գեներալ նահանգապետի այն խօսքերը, որով նա ասում է, որ բօլգարները ամենայն հաստատամտութեամբ պէտք է ջանան, որ թիւրքերը իրանց երկրի մէջ չը մնանեն, և հարկը ստիպած ժամանակ, նրանք պէտք է գլուխ բարձրացնեն այն ազատութեան համար, որ Ռուսաստանը շնորհել է նրանց։

ԼՕՆԴՕՆ, 6/18 փետրվարի։ Լուր կայ թէ իբր Աֆղանիստանի էմիրը, հպատակվելով Ռուսաստանի կամքին, յայտնել է, որ նա երբէք չի համաձայնի անգլիացոց հետ հաշտութեան պայմաններ կապել։ Զուլուսները ենթարկվում են ընդհանուր զինուորագրութեան նոյն սիստեմային, ինչ սիստեմայով որ Պրուսիայումն են զինուորագրութիւն անում։ բացի այդ նրանք կրթված են պրուսական այն զինուորներից, որոնք քսան տարուց աւելի է, որ գաղթել են Կապի նահանգը. անգլիացիք նրանց վարձեցին իրանց պատերազմական ծառայութեան մէջ, բայց իրանց խոսքը չը կատարեցին, պրուսիացիք անցան Տրանսվալիայի հանրապետութեան Կաֆիրների կողմը։ Այն յարձակողական տակտիկան, որի շնորհիւ Զուլուսները յաղթող հանդիսացան, հին պրուսական տակտիկա է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 փետրվարի։ Լօրիս-Մելիքօվը Ցարիցինից փետրվարի 7-ին հեռագրում է, որ Նիկոլկիյ և Ստարիցկիյ գիւղերում վերջին հիւանդութենից յետոյ, արդէն անցնում է քառասուն երկու օրվայ ժամանակը, կարանտինական օրէնքի 1407 յօդուածի հիման վրա վճռված է, որ վերոյիշեալ գիւղերը հանվեն կարանտինական գլխաւոր գծից, և մնան միայն մասնաւոր կարանտինի տակ մինչև այն ժամանակ երբ կը հրամայվի այրել այն տները, որոնց մէջ հիւանդներ են եղել։ Վաղը փետրվարի 8-ին արտասահմանի բժիշկները տեղ կը հասնեն։ Աստրախանի նահանգում ժանտախտից ոչ հիւանդացողներ, և ոչ էլ մեռնողներ կան։

ԼՕՆԴՕՆ, 7/19 փետրվարի։ Այսօր պարլամենտի անդամները ստացան այն գրագրութիւնները, որոնք վերաբերվում են միջին Ասիայի գործերին։ Շուվալովը իր դեկտեմբերի 19-ին Սալիսբիւրիին ուղղած հեռագրի մէջ ասում է, որ Կայսրը արամադրված է, Ռուսաստանի և Անգլիայի բարեկամական յարաբերութեանց մասին, ինկատի ունենալ միջին Ասիայի գործերը, և իսկոյն յետ կանչել Կաբուլից ռուսաց դեսպանութիւնը։ Մի և նոյն թուին Սալիսբիւրին պատասխանեց, որ եթէ երկու պետութիւնների մէջ, միջին Ասիայի վերաբերմամբ կատարեալ համաձայնութիւն չէ կայանում, դրա միակ արգելառիթն այն է, որ ռուսաց դեսպանութիւնը Կաբուլում է գտնվում. հէնց որ ռուսաց դեսպանութիւնը կը հեռանայ Կաբուլից, այն ժամանակ անգլիական կառավարութիւնը հաւատացած կը լինի, որ երկու կողմերի պարտականութիւններն էլ, Ասիայի և Աֆղանիստանի վերաբերմամբ, կանոնաւոր ընթացք կը լինեն բռնած։ Մի և նոյն օրը Սալիսբիւրին հեռագրեց Լաֆտուսին, որ Շուվալովը հաղորդել է նրան, որ ռուսաց դեսպանութեանը զեկուցում են ուղարկել, որպէս զի նա դուրս գայ Կաբուլից։

ԽԱՐԿՕՎ, 10 փետրվարի։ Երէկ երեկոյեան 11 ժամին Խարկովի Նահանգապետ իշխան Կրապօտկին վերադառնալով ազնուական օրիորդների Խարկովի ինստիտուտի պարահանդէսից, Վօզնեսենսկի հրապարակի այգիի անկիւնում վերաւորվեցաւ անյայտ չարագործի ատրճանակից։ Հիւանդի դրութիւնը բըժիշկներին վտանգաւոր է երևում։ Քննութիւնը սկսված է։ Մարդասպանին որոնում են։

Խմբագիր—Հրատար. ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԹԷՑԻ ՎԱՃԱՌԱՆՈՑԻՑ նոր ստացվեցան 100000 ֆունտ ֆուչանի և կեանքի թէյ սեփական փոխանակութեան 1 ր. 20 կ. մինչև 8 ր. ֆունտը։ Ֆուչանի թէյի համար ինձանից գնողներից շատերը նամակներով շնորհակալութիւն յայտնեցին, այս ուներմ ապագայում գնողներից նոյնպէս ոտանալ։ Ծախում է մեծ քանակութեամբ և փոքր։ Փոստայի ծախսը ինձ վրա առնում եմ։ Հասցէն Միքայէլեան կամուրջ, «Кавказъ»-ի խմբագրատան տակ։ Վաճառական Ա. Պօլոսովին։

2—10

ԹԻՖԼԻՍ հիւրանոցում Դիվօրցովայա փողոցի վրա, Սարաջևի տան պատրաստվում են բլիններ յունվարի 17-ից առաւօտեան 11 ժամից մինչև երեկոյեան 4 ժամը։ Մուտքը բացից է։

3—4

ԳՐԻԳՈՐ ՆԱՍԻՐԵՆՑԻ ՊԱՏՐԱՍՏԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԻ ԽԱՆՈՒԹՈՒՄ ԵՐԵՒԱՆԻ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ սացվել են մեծ քանակութեամբ ՖՐԱԿԻ ԵՒ ՏՐԻԿՕԻ ՍԻՒՐՏԻԿՆԵՐԻ ՇՈՐԵՐ, որսորդական ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺՕԿԵՏՆԵՐ, ձմեռային ՊԱԼՏՈՆԵՐ և ՎԱՐՏԻԿՆԵՐ, երեխայոց հագուստներ, ՎԵՐԱՐԿՈՒ—ԽԱԼԱՏՆԵՐ զարդերով, նոյնպէս ընդունվում են ՊԱՏՈՒԷՐՆԵՐ զինուորական և քաղաքական հագուստների համար։ Ցոյս ունեմ, որ ինչպէս պատուիրողները նոյնպէս է գնողները ԲԱՒԱԿԱՆ ԿԸ ՄՆԱՆ։

34—75

MAISON DE COMMISSION
et d'exportation
NICOLAS AMIRAGOFF ET C-o
16, Rue de la Grange-Batelière
PARIS

Կոմիսիոներական տուն ՓԱՐԻԶՈՒՄ։ Գրագրութիւն վեց լեզուներով։

Նիկողայոս ԱՄԻՐԱՂԵԱՆՑ

«Մարդութեան իրաւունքը Վրաստանում» «Крѣпостное право въ Грузіи» ռուսերէն լեզուով, Գուստավ Քալանթարեանցինը, ծախվում է Բերենշտամի գրավաճառանոցում, Գօլովինսկի Պրոսպէկտի վրա։ Գինն է 30 կ., փոստայի ծախսով 35 կ.։ Գրավաճառներին անվում է զեղչում 20%։

1—3

Особа, КОНЧИВШАЯ С. ПЕТЕРБУРГСКІЕ ПЕДАГОГИЧЕСКІЕ КУРСЫ (теоретическіе и практическіе), даетъ уроки по всѣмъ предметамъ гимназическаго курса и по новѣйшимъ языкамъ. Готовитъ къ экзамену Домашней Учительницы. Просятъ обращаться въ контору газетнаго агентства Шавердова.

Մի օրիորդ, ՈՐ ԻԻՐ ՈՒՍՈՒՄԸ ԱՒԱՐՏԵԼ Է ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ (տեսական և գործնական), ընդունում է իւր վրա գիմնազիական կուրսի դասեր ամեն առարկաներից, նոյնպէս և նոր լեզուներից։ Պատրաստում է նոյնպէս քննութեան «տնային վարժապետութեան» պաշտօնին։ Դիմել «Շավերդեանի լրագրական գործակալութեան կանտօրին»։

ԿՕՐՇԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ԵՐԹԵՒԵԿ պատրաստում է երեխաներին ՄԻՋՆԱԿԱՐԳ բոլոր ուսումնարանների ՓՈՔՐ դասատունների համար։ ՀԱՇԻՑ ՑԵՏՑ ԿՐԿՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՆ ԼԻՆՈՒՄ։ Ֆրանսիերէն և գերմաներէն լեզուների գործնական և տէօրետիկական դասեր են տրվում։ Ուսումնարանը գտնվում է Վօրոնցօվսկայա Նաբերեժնայա փողոցի վրա, Բելևաեվի նախկին տանը, № 19.

1—3

Բժիշկ Աւետիս Բաբայեան Բաբայեվ ընդունում է հիւանդներին Թիֆլիսի բժշկանոցում չորեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը ջղային և հոգեկան հիւանդութիւններ բժշկելու։ Բացի այդ բժիշկ Բաբայեան Բաբայեվ հինգշաբթի և շաբաթ օրերը առաւօտեան 9—10 ժամը ընդունում է իր տանը ներքին հիւանդութիւններ ունեցողներին էլեկտրականութեամբ բժշկելի աղքատ հիւանդներին։ Հասցէն Սերգիևսկայա փողոց, տուն Բայանդուրովի։

2—10

„ՄՇԱԿ"
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
1879 թվին

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներին հետևեալ օրերից։

Լրագրի գիրքը և պրոգրամման նոյն են մնում։ Մենք ստանում ենք ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվանը 6 ռուբլ։ Գրվել կարելի է ՄԻԱՅՆ ԹՄԲԱԳՐԱՏԱՆ ՄԷՋ։

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետևեալ հասցէով՝ ТИФЛИСЪ Редакція «Мшакъ».

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՔԱՐԱԾՈՒԽ „ՌՈՒՍԱՍՏԱՆ" ՀԱԼԽՏԻ

(ՀԱՆՔԻՑ, ՈՐ ԳՏՆՎՈՒՄ Է ԶԷԼՕԲԱՆԻ ԱՐՈՒՐՋԱՆԻ ԿՈՒՐՍԷՔԱ ԳԻՒՂԻՄ

ԸՆԿ. ՆԻՇՄԱՆ—ՀԷՆԻՆԳ

ծախվում է ՇԷՕՆԻՆԳԻ ՊՎԻԼԻՕՆՈՒՄ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՄԻԱՍԻՆ ԱՄԲՈՂՋ ՎԱԳՕՆՆԵՐՈՎ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԿԱՑԱՐԱՆԻՑ ՊՈՒԴԸ 25 ԿՕՊ., ԻՍԿ ՓՈՔՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ ՔԱԼԱՔԻ ՄԷՋ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՕՊԷԿՈՎ։

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ ԵՒ
ՏԱՐԲԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Աշակերտների և աշակերտուհիների ընդունելութիւնը սկսաւ յունվարի 8-ին 1879 թուականի։

Մանկական պարտէզը ընդունվում են մանուկներ, երկու սեռի էլ, 4-ից մինչև 7 տարեկան հասակը, իսկ տարրական դպրոցը 7-ից—12 տարեկանները։

Ուսման ընթացքը յարմարեցրած է միւս դպրոցների ընթացքին, այնպէս որ դպրոցում աւարտողները կարող են մտնել տղայք՝ տղայոց և աղջկունք՝ օրիորդաց դպրոցի առաջին դասատունքը։

Պարտէզն ու դպրոցը գտնվում են Վելիամինովսկի փողոցում Իշխան Ն. Ամատունու տանը. №—11։

ՓԵՏՐՎԱՐԻ 13 ՏԵՂԵԿԱՏՈՒ ԹԻՖԼԻՍ 1879

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ
(Փետրվարի 12-ին)

	Ր.	Կ.
Ոսկին (պօլուիմպերիալը)	8	53
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.	1630	—
Հին 20 կ. 72 պր. 1000 „	1320	—
Վիգրիչնի 5% առաջի փոխառութեան տոմ. 100 „	253	—
Երկրորդ 5% վիգրիչնի „	229	—
Մարսելի կուրսը 245—	100	—
Լօնդոնի կուրսը Օդեսայի վրա.	10	30
Վենայի կուրսը ածէ 121 գլ.	100	—
Դաւրեժի բարաթը. . .	5	80
Առևտրական բանկի ակցիան 200 մ. . .	31[illegible]	—
Փօթի Թիֆլիսեան երկաթուղու ակցիան 125 մ.	102	—
Շաքարը բրօցկու . . .	7	40
„ միւս տեսակը.	7	30
„ չաքարաւազը .	6	—
„ տրանզիտը. .	6	80
„ մաքսը վճարած	12	—
Բամբակը Երևանու Ամերիկայի սերմից. .	7	40
Միւս տեսակը հին սերմից.	6	70
Բուրդը թուշի . . .	8	—
„ թարաքամի .	4	10
Աղիւրը Շորագալու	1	80
„ Երևանի. . .	—	—
Գարին	1	30
Մոմը ընճարպի (стеар.)	12	60
Մետաքսը Նուխվայ . .	190	—
Կախետունը. . . .	140	—
Կոկոնը Նուխվայ (բոժ.)	40	—
Ֆրիզոնը (լաստը) Ագուլեաց	55	—
Կօֆէն մօկօի. . . .	27	—
„ լիանի . . .	23	—
„ Մարտինկոյին	18	

ՀՆԴԱԳԻՐ

	Ր.	Կ.
Կովկասի և Անդրկովկասի քաղաքները . .	1	
Ռուսաստան .	2	
Աւստրիա . .	3	
Անգլիա. . .	4	
Գերմանիա . . .	2	88
Ֆրանսիա . . .	3	75

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՆԿԱԲԱՐՁԱԿԱՆ ԴՊՐՈՑ
(Վէրայի վրա № 38)

Մանկանների ընդունելութիւնը ցերեկվայ և գիշերվայ ամեն ժամանակ, օրը 50 կոպէկ վարձով, իսկ չքաւորներին անվճար։ Առանձին սենեակներում ամիսը 30—50 ռուբլ։ Կանանց հիւանդութիւնների բժանմունքի մէջ վարձը ընդհանուր սենեակում 18 ռուբլ, իսկ մասնաւոր սենեակներում 30 ռուբլ ամսական։

Երթևեկ հիւանդ կանանց և երեխաների ընդունելութիւնը ամեն օր, բացի կիրակի օրերից, 9½ մինչև 11 ժամ առաւօտեան։ Բժշկապետ Անանով։

ՓՕԹԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փօթի (ճանապարհորդների գնացքը) 9 ժամին 21 րոպէ առաւօտեան։ Մինչև Միխայլօվօ (խառն գնացքը) երեկոյեան 5 ժամ. 18 րոպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	9. 21	5. 18
Գօրի . . .	11. 58	9. 43
Միխայլօվօ.	1. 29	11. 57
Ռիօն . . .	6. 47	
Փօթի . . .	9. 40	

	առաւօտ.
Փօթիից . .	9. 13
Ռիօն . . .	12. 13
Միխայլօվօ. .	5. 39
Գօրի. . . .	7. 5
Թիֆլիս. . .	9. 31

Թիֆլիս գալիս է առաջին գնացքը երեկոյեան 9 ժ. 31 ր. երկրորդը՝ առաւօտեան 7 ժ. 56 ր.

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գօրի. . .	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2. 18
Ռիօն. . .	9.	6. 75	3. 75
Փօթի	13. [illegible]	9. 75	5. 42

ՓՕՍՏ

Ամեն տեսակ թէ նամակներ. թէ լրագիրներ և թէ ծանր փոստ ամեն տեղ ուղարկելու, ընդունվում են ամեն օր, առաւօտեան 8 ժամից մինչև 1 և կէսօրից յետոյ 3 ժամից մինչև 7։ Իսկ կիրակի օրերը հասարակ նամակներ մինչև 10 ժամ առաւօտեան և 3—7 երեկոյեան։

Ռուսաստանից և Արտասահմանից փոստը ստացվում է Թիֆլիսում ամեն օր։ Բացի տրակտից՝ երեքշաբթի և շաբաթ օրերը։ Երևանի տրակտից՝ երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ։ Փօթի-Թիֆլիսեան երկաթուղուց ամեն օր։ Նուխու տրակտից չորեքշաբթի և կիրակի։ Բելիկլիչի տրակտից երեքշաբթի և շաբաթ։

ՆԱՄԱԿՆԵՐ

	Կոպ.
Բաց նամակ արժէ .	4
Ռուսաստան և Եւրոպայի բոլոր երկիրները նամակը արժէ	8
Ամերիկա	8
Պարսկաստան . .	8
Հնդկաստան . . .	70
Եգիպտոս	27

ԲԺՇԿԱՆՈՑ

Հիւանդների ընդունելութիւնը ժամը 9-ից մինչև 1 ժամը կէսօրից յետոյ։

Երկուշաբթի. Լիսիցեվ և Գօրալեվիչ ներքին հիւանդութիւններ, Բակտ վենեական և կաշու հ., Քուչարեանց վիրաբուժական և կանանց հիւանդութիւններ։

Երեքշաբթի. Վէրմիչէվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակտ կուրծքի և ներվային հ., Ա. Բախուտով կանանց, երեխաների հ. և մանկաբարձութեան. Բէլիս աչքի հ.։

Չորեքշաբթի. Լիսիցեվ ներքին հ., Բակտ վենեական և կաշու հ.։

Հինգշաբթի. Վէրմիչէվ ներքին հ., Քուչարեանց սիֆիլիտական և միզային գործարանների։

Ուրբաթ. Լիսիցեվ ներքին հ. Բակտ կրծքային և ջղային հ., Ա. Բախուտով կանանց և երեխաների հ. և մանկաբարձութեան։

Շաբաթ. Վէրմիչէվ ներքին հ., Մինկեվիչ վիրաբուժական հ., Բակտ վենեական և կաշու հ., Բէլիս աչքի հիւանդութիւններից

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—ԻԳԴԻՐ. Մ. Մ. Ա. Միամբ-ստացրէք Հ. Վ.-ին։ Ստացված է։ Շուտով ձեզ մի նամակ կուղարկենք որով կը մեկնենք թէ ինչ տեսակ նամակներ պէտք է ուղարկէք։

—ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍ. Մելիքզադէ. Ստացանք յօդուածը և նամակները։ Միւս յօդուածի մասին շուտով կը տեղեկացնենք։

—ՌԱՇՏ. Ց. Ռ. Ի. Ձեր գրութեան համեմատ «Մշակ» վաղուց ուղարկում ենք, բայց բաժանորդագինը պ. Մ.-ից դեռ չենք ստացել։

—ԱԼԷՔՍԱՆԴՐՕՊՕԼ. Տ. Ա. Ցօդուածները հասել են, բայց մինչև հիմա չը կարողացանք տպել, որովհետև չափազանց շատ նիւթեր ունենք։

—ՂԱԲՍ. Ս. Նամակ ստացանք։ Կը տպենք հետևեալ համարներից մէկում։ Խնդրում ենք նամակները աւելի մաքուր գրել և ուղղած սխալների վրա ուշադրութիւն դարձնել։

Дозволено Цензурою 12 Февраля 1879 г. Тифлисъ
Տպարան Ց. Մարտիրոսեանցի
Типографія Мартиросіанца